

Աղջիկ կարողուել իտի.— Ինչ ժամանակ էդա մարդ կ'դառնայ, կ'կեայ, ընձը խաբար տէք:

Դաւիթ էլաւ, կինաց. յիրիկուն խասաւ Իրան*):

Մտաւ Իրանայ քեաղաք, չուրս պիւլիւր բիւրջ ի բազան ի էնդեղէն կինաց, տը մտնէր Խանդիւթ խաթընը տունն. էտու դարգաւանքտիր¹⁾ էկան յէռջիւ²⁾, ասին.— Դեաստիւր չ'կայ տիւ մանիս:

Էդ էլ ձեռ իտու, բռնից էրկու փալիւան, մէկ էղար էն պատ, մէկ էն պատ,— ծամունը³⁾ պէս լըղըղուան⁴⁾ պատին:

Զուհար խասաւ մատ Խանդիւթ խաթիւն.— Մէկ մարդ իրի, փալաւանքտիր սպանից:

էն ժամանակ քեառտուն մարդ Խանդիւթ խաթընը տունն նըստուկ ին. կանգնան, թրիւր առին, տի եան⁵⁾, սպանին:

Խանդիւթ խաթիւն էսաց.— Յիւրիւր մ'առնէք, էն մարդ, ինչ զան էրկու փալիւան սպանից, ձի քեառտունին էլ կ'սպանը, մ'երթէք, տիւ նստէք, իս էրթամ (Խանդիւթ խաթիւն ահախաւ⁶⁾, որ Դաւիթն էր):

Էլաւ բակը մէչ. ինչ էլաւ բակը մէչ, Դաւիթ էկաւ յէռջիւ. ինչ Դաւիթ էկաւ յէռջիւ, խապաւ Խանդիւթ խաթընը ճակատ պագնից, մէկէլ իրիս պագնից. ձեռ էտու սերտ տը պագնէք, Խանդիւթ խաթիւն պոնցկի⁷⁾ մ' էղար Դաւիթը քինթը վերայ, իրիք պուտ⁸⁾ արուն կաթաւ գիտին.— Տիւ մէկ էկար բարով, իմ ճակատ պագնըցըր քիւ ճամբսը խաթըր խամար. վո՞վ քի գեաստիւր տուի, իմ սերտն էլ պագնիս:

Էսաց.— Թուղ էրթամ զձին կապիմ, էմ տամ:

Էսաց.— Տիւ իմ ձիու էմ տուող չիս:

Զգեամ բերնէն էխան, էն քեառտուն փալիւանի ձիանքն էլ

1) Դոնապաններ: 2) Առաջ: 3) Մաստակ: 4) Կպէլը 5) Պիտի գան: 6) Հասկացաւ, գլխի ընկաւ. 7) Բոռունցք: 8) Կաթիլ:

*) Ա. վարիանտի պատմողը Խանդուլթ խաթունի քաղաքի առունը չէր յիշում: Բ. վարիանտով՝ Խանդուլթ խաթունի հայրենիքը «Խոյայ» քաղաքն է: